

պատմադիրների մէջ իրենց ունեցած արժանաւոր տեղեցն ևս կզրկուին:

Ար ինչ Թովմաս Արծրունւոյն է վերաբերում, պէտք է ասել՝ որ նա Արծրունեաց մեծ ցեղի ճշմարիտ պատմադիրն և անդամն էր: Իմ նորա մասին Հիշատակարան Ղեմարանի վեցերորդ հատորում զրած հետազօտութիւնքս բաւական ճանաչել տուին նորա պատմութեան կարեւորութիւնն և արժանաւորութիւնքն յայնրմ՝ որ իսկապէս շայաստանին և մինչև 936 թուականը շայաստանի Մահմետականաց հետ ունեցած յարաբերութեանցըն է վերաբերում. այդ ժամանակն է, երբ կարծիք կայ թէ վախճաներ է Վասպուրականի Վաղիկ թագաւորը: Տեղեկութեանց այս հարստութիւնը և նորա ժամանակագրական մեծ ճշգրտութիւնն էին պատճառ, որ խրախուսեցին զիս զայս թարգմանել: Այդ տեղեկութեանց առաջին երեսներում կարելի է գտնել երկրային դրախտի տեղեկագրութեան հետաքրքրելի նկարագրութիւնը, որոյ աղբիւրը զեռ ևս ճշգրտել չեմ կարողացեր: Թովմասի յատկութիւններէից մինն ևս այն է, որ ընտիր ոճ ունի և լաւ մշակուած է, չնայելով որ շատ սեթեւեթեալ է և լի Աստուածաշնչի վկայութիւններով, որոց առաւելութիւնը փոքր ինչ պակասեցնել յուսամ կնիքուի ինձ, երբ նա ամբողջ երեսներ վկայութիւններով կցուցանէ: Բաց յայդմանէ Թովմաս Արծրունին շատ հետաքրքիր հնախօս է, և ինքն անձամբ տականատես է եղեր այնմ ամենայնի որոց վերայ պատմական կերպիւ խօսում է, և մանրամասնօրէն և մեծ ուշադրութեամբ պատմում է զէնքի, զընտորական ճակատայարդարութեան և այն ժողովրդի կամ ցեղերի բարուց վերայ, որոնք նորա պատմութեան նիւթքն են ընտրուած: Իւր պատմութեան ձեռագիրները շատ հազուադիւս են և զրեանց ու զլիտց թուով և բաժանմամբ շատ տարբեր միմեանցից: Այս բոլոր տարբերութիւնքը թարգմանութեան ծանօթութեանց մէջ կնշանակուին:

Ա. Բարսեղի:

Ս. Պետրոսի:

ԲԵՆԻՍՄԻՆ ՖԻՍԿԻԼԻՆԻ

Կ Ե Ա Ն Ք Ը.

(Նոր-նոր-քիտն):

Զ.

ՖԻՍԿԻԼԻՆԻ ՀԵՇՏԵՐԵՐԱԿԵՆ
ԳՈՐԾՈՒՆԷՌԹԻՒՆԸ ԼՕՆՏՕՆԻ ՄԷՋ.

Ինչպէս որ Ֆենսիլիանիան, նոյնպէս և միւս տասներկու անգլիական դազթականութիւններն Ամերիկայի մէջ ծանր փորձանքներու հանգիպելու էին շուտով: Աոցա մայրենի երկիրը, որմէն որ դազթուած էին, Անգլիան էր. սակայն և այնպէս Ամերիկայի մէջ հաստատուելէն սկսեալ նոքա որոշեալ իրաւունքներ և ազատութիւններ ունեին: Վէտրդ Վ. անգլիական թագաւորի պաշտօնականները, կամեցան խել այս իրաւունքներն ու ազատութիւնքը Ամերիկացիներու ձեռքէն:

Ամեն տասնեկերեք դազթականութեանց վրայ կամայօրէն հարկ դրուեցաւ, այնինչ առանց սղգային պատգամաւորաց որոշմանը հարկ զնել օրէնքով արդելուած էր:

Ներկրի ամենալաւ մարդիկը զարհուրեցան ու զայրացան Աճնտօնէն եկած անիրաւ պահանջմունքներէն և իրենց զգուշարար բողոքը բարձրացուցին: Բայց Մեղիայի կառավարութիւնը կոյր էր և չէր տեսներ իր սեխական օգուտը, որն որ կարգել էր բռնի և ապօրինի միջոցներ բանեցնել գաղթականներու դէմ, եթէ չէր ուզեր որ նոքա բաժնուին մայրենի երկրէն: Նրեք միլիոն ու կէսի չափ բնակիչ ունեցող գաղթականութիւններ Մեղիացւոց անւտուրի համար վերին աստիճանի արդիւնաւոր դաշտումն էին, ուր որ նոքա իւրաքանչիւր տարի վեց միլիոն Ֆունթ ստերլինգի ապրանք կը վաճառէին: Այժմ այս ամենը կորցնելու վրայ էին: Մէկ անիրաւութիւնն ետեէն ուրիշը կը բերէ: «Աթէ նոքա դեռ յանդգնին», ըսին Մեղիացւոց մեծաւորները, «հակառակելու մեր հրամանին, մեր զօրքերն իսկոյն կուտուցանեն նոցա թէ ինչէ հնազանգութիւնը, և ինչ այնուհետեւ կրկին ու երեքկին վճարեն»:

Չանց կառնուէք այս տեղ հակառակութեանց ընթացքը քայլ առ քայլ պատմելու. աւելի ընդարձակ նկարագրութիւն ուղեցողները թող բարեհաճին զխմել վարը նշանակուած գրքոյկին, որ մեք ընթերցողի ուշադրութեանը կը նուիրենք *):

1764 թ. Յրանկլին իր քաղաքակիցներու անուամբ գնաց Աճնտօն հաշտարար միջնորդութեան համար: Մէկ տարի առաջ

ևս եկած էրնա Աճնտօն, բայց ուրիշ պատճառով. այն ժամանակ Մեղիայի մեջ դեռ ոչ ոք չէր կարծէր, թէ արքայական կառավարութիւնը մօտաւոր ապագային ազատութիւնն ոտնակոխ անելով, պատուոյ և խոհմունքեան օրէնքները և իրեն հարազատ երկիրը բռնակալութեան լուծի տակ ընկձել կուզենայ: Սակայն այն ժամանակ ևս քանի մ'ազատամիտ մարդիկ արդէն կը գուշակէին, թէ ո՛ր կողմ փչելու էր քամին կառավարութեան շրջաններու մէջ: Աորդ Արամդէն Յրանկլինի հետ խօսելով ասած էր, թէ «Նայելով ձեր այնքան դովասանուած սիրոյն դէպի Մեղիան, զիտեմ որ դուք Մեղիայիքը զձեզ նորա հետ միաւորող միութեան կապերը օր մը պիտի խզէք և անկախութեան դրօշակը վերցնէք»: — Յրանկլինի պատասխանն էր. «Ահնչ բան այնքան հեռու չէ Մեղիային հայրենակիցներէս, ինչքան որ մայրենի երկրէն զատուելու և առանձին տէրութիւն կազմելու միտքը»: Այրկեան միտքը. «Միայն թէ դուք անարգանք չը վարուէիք հետեւս», առ որ Աորդը խորհրդարար ասած էր, թէ «Այդ ճմարիտ է և այդ է իսկ ապագայ գժտութեանց պատճառներէն մին, զոր ես այժմէն իսկ կը նախատեսեմ»:

Այժմ Յրանկլին եկած էր Աճնտօն ամէն միջոց ի գործ դնելու, որպէս զի կառավարութիւնն և պաշտօնեաներուն կորօրէն հետեոյ խորհրդարանը յետ քաջուին անիրաւութեան ճանապարհէն:

Չկամինք զատուիլ ձեզմէն, բայց չկամինք նաև անարգանք կրել ձեր ձեռքէն: Ինչ որ տասած էր, Յրանկլին Աորդ Արամդէնին, նոյնը կըմտածէին լեովին և գաղթա-

(*) Գէորգ Աւաշինգթօն. Գործ Ֆերգինանդ Շմիտի Ծանօթ. Հեղին. — Թարգմանիչն յոյս ունի, որ այս պատուական գրքոյկն ևս Հայ հասարակութեանը մատուցանելու բախտ կունենայ շուտով: Փ. Ա.:

կանու թեանց ամենարնաիր մարդիկը: Ամերիկացի պատողամու որները խորհուրդ կազմեցին Նիւ — Յօրկի մէջ, ուր որ էր նաև ազնուամիտ Ա աշխնդթօնը: Հետեւեալ նամակէն, որ նա գրած էր ընկերներէն մէկին, պարզ կերևի, թէ որքան համամիտ էր Արանկլինին գլխաւոր հարցի նրկատմամբ: «Արդ ի ժամանակիս», կրսէ նա գրի մէջ, «երբոր մեր գոռոզ տիրապետներն ոչ այլ ինչ կը ցանկան, բայց եթէ մեր ազատութեան ոտնակոխ լինելը, ինձ շատ կարևոր կը թուի, որ շուտով քայլ մ'անենք թշնամու հարուածը խափանելու և մեր նախնեաց իրաւունքները պաշտպանելու համար: Բայց թէ ի՞նչ պէտք է անենք, այս դեռ անորոշ է, միայն զիտեմ հաստատա, որ ոչ ոք վայրկեան մ'անգամ յապաղելու չէ սուսեր հանելու ի պաշտպանութիւն հայրենի սուրբ բարեաց. — այս իմ խորին համոզմունքս է: Մակոյն սուսերը, խնդրեմ նկատեցէք այս, մեր վերջին օգնութիւնը պէտէ լինի, վերջին ապաւինը: Երդէն փորձով տեսանք, կրսեն ունանք, որ մեր խնդիրներն արքայական գահի ու խորհրդարանի առջև կշիռ չունին: Մակայն եկէք, այլ ևս փորձ մը փորձենք, — նեղե՛նք նոցա առևտուրն ու գործարանները, թերևս այդով ստիպենք զնոսա յարգելու մեր իրաւունքները: Հիւսիսային նահանգներն արդէն զիմած են այս միջոցին»:

Նահանգները իրաւ այդ միջոցն ի գործ դրին և երկար տարիներ համբերեցին առանց զէնքի զիմելու: Արանկլին իրբև հաշտարար միջնորդ ամենայն զօրութեամբ կը ջանար մեղմել երկպառակութիւնքը, և անթիւ շարադրութիւններ կը հրատարակէր

Լօնսօնի մէջ, յոյց տալով Անգլիացիներուն, թէ ինչ կորստաբեր ճամբու վրայ էր կառավարութիւնը: Թէև նա զիտէր, որ հայրենակիցները վերջ ի վերջոյ զէնքի պիտի զիմին, այնու ամենայնու մինչև որ յոյս ունէր համոզական բանիւ ազդելու կառավարութեան վրայ՝ պարագ կը համարէր անելու ինչ որ միայն կարելի էր, որպէս զե մարդկային արեան յեղումն արգելուի:

Շատ բնական է, որ այսպիսով կառավարութեան ստելութիւնը յարուցանելու էր իր դէմ. կառավարութիւնը զրկեց զնա Ամերիկային փոստերու գլխաւոր վերատեսչութեան արդիւնաւոր պաշտօնէն: Բայց այս սխտկալութիւնը միթէ կարող էր արգելք լինել Արանկլինին՝ պաշտպան կալու արդար գործին: Բնու ոչ: «Մեր նահանգները», գրեց նա իսկոյն բարեկամներէն մէկին, «ամենախոհեմ և ամենայարմար կերպիւ վարուած կը լինին, եթէ այժմէն իսկ ընդհանուր ժողով մը կազմեն, իրենց իրաւունքները հրապարակաւ և ամենայն սնդութեամբ հրատարակեն, արքունեաց հարկ չբաւալու միաբան դաշն կապեն՝ մինչև որ թագաւորը ու երկու խորհրդարանները մեր իրաւունքները չբերականգնեն, և վերջապէս այս պայմանն Անգլիական կառավարութեանը հաղորդեն: Հաւաստի եմ, որ այս քայլը վճռողական որոշմունք յառաջ կը բերէ և այնուհետև կառավարութիւնը կամ հարկ կրտեսնէ կատարելու մեր արդարացի պահանջմունքը և կամ սաստիկ միջոցներու զիմելով՝ կուզենայ բռնօրէն ստիպել, որ հրաժարուինք անոնցմէ. բայց չենք հրաժարուեր և նորա անիրաւութենէն ու զազիր հալածանքներէն մեր միութեան համար զօրու-

Թիւն, խրախոյս, պնդութիւն քայլերով՝ վերջապէս ցոյց կուտանք աշխարհին, որ մեր վարմունքն արդար էր միանգամայն, :

Այդ խորհրդին հետեւելով տասնեկերեք նահանգներու պատգամաւորները Ֆիլադելֆիայի մէջ ընդհանուր ժողով կազմելու գումարուեցան և զրեցին մէկ մեկնութիւն ազգային իրաւանց, մէկ խնդիր դէպի Թագաւորը, մէկ ընդհանրազիր դէպի մեծ Բրիտանիոյ ազգը և մէկ յայտարարութիւն Անգլիական դաղթականներուն — Թղթեր, որոցմէն խրաքանչիւրն ամենավսեմ ազնուութեան ու հասուն խոհեմութեան վկայական մի էր: Յրանկէն այլ ևս անգամ մը հաշտութեան փորձ արաւ, բայց անսնելով որ և այդ անյաջող մնաց ու լսելով, որ զնա բանտարկելու միտք ունին, նաև նստաւ ու հայրենիք չուեց:

1775 թ. Մարտի 22. տասնե մէկ տարուայ բացահայտութենէն վերջը՝ կրկին եկաւ Ֆիլադելֆիայ — բայց այժմ իբրև 69 տարեկան պէտք ծերունի: Վաղաքացիք ընդունեցին զնա մեծ պատուով և նոյն խիթ Թուականին պատգամաւոր ընտրեցին ընդհանուր ժողովի համար:

Ը.

ՊԼՏԵԲԸՋՄԻ ԺԸՄԼՆԵԿԸ.

Հայի տեղ քար տունին դաղթականներուն և ապստամբ անուանեցին, սյսինքն յայտնեցին որ պէտք էր միայն վառօդով, կապարով ու սուսերով պատասխանել նոցա: Ի՞նչ կարող էին այլ ևս անել Ամերիկացիք, բայց եթէ հրատարակել աշխարհիս առջև, որ նոքա այնուհետեւ մեծ Բրիտանիոյ կառավարութիւնը չեն ընդուներ իբրև իրենցը: Այդ ևս արին:

Տասն և երեք միացեալ նահանգներին անկախութեան յայտարարութիւն տեղի գտաւ 4 Յուլիսի 1776 թ:

Բայց Անգլիական կառավարութիւնը իր իշխանութիւնն առանց մարտնչելու կորցնել չուզեց և նորածին տէրութիւնն աղաաութեան հասնելու համար՝ մարտնչելու ստիպուեցաւ: Խռովութիւնը սաստկանալով բանը արեան հասաւ և այդպէս սկիզբ առաւ Ամերիկայի պատերազմը վասն ազատութեան:

Անգլիան տասնեկերեք զունգ զօրք ուղարկեց Ամերիկայ՝ Յով անուն զօրավաթի հրամանատարութեամբ, սորան հրամայուած էր, որ դաղթականներէն հնազանդութիւն պահանջէ և եթէ ընդդիմանան, պատերազմն անյապաղ յստաջ վարէ: Յրանկէնի ազդեցութիւնը ժողովրդի վրայ իմանալով, զօրավաթը զբաւոր կերպիւ հազորդեց նորան, որ զզոյշ կենայ ազգի ևռանգը բորբոքելու:

Յրանկէն պատասխանեց. «Այն մտերմական Թղթերն, որ դուք կը յիշէք» խորհրդարանի տուածներէն աւելի բան չեն խոստանար մեզ և նոցամէն աւելի նշանակութիւն չունին մեր աչքին. ներդուրութիւն կրխոտանան մեզ, եթէ յ:ժարին + հնազանդելու: Չեր գոռոզ, տակաւին խելքի չըբերուած ազգի ողորն միայն վայել բան է, վերաւորուած ու զրկուած դաղթականներուն ներդուրութիւնն առաջարկելը: Այդպիսի թիւք միջոցներով միայն մեր զայրոյթը կը շարժէք: Ի՞նչ հնազանդի՞նք ու հպատակինք դարձեալ այն տէրութեանը, որ ձմեռուայ մէջ մեր քաղաքները կայրէ, հանդիսա զիւղացիներն ու սարուկները մեր դէմ կաղմկէ, մինչև անգամ վորձու

օտարականներ կառաքէ մեր դաշտերն ա-
րեամբ զանգեղու համար: Սակայն դնենք,
որ կրցաք անյիշաչար լինել դէպի մեզ. ար-
դեօք կարո՞ղ ենք նոյնը սպասել և ձեր ազ-
գէն, որ մեզմէն սաստիկ վերաւորուած կը-
համարէ զինքը: Ոչ. ձեր ազգն ամենայն
հնար բանեցնելու է մեր քաջութիւնն ան-
ողորմ բռնութեամբ ընկձնելու և մեր բա-
րօրութիւնն ի չեք դարձնելու: Չերդ պայ-
ծառութիւնը կրսէք, որ թագաւորը կու-
զէ յարատե խաղաղութիւն և սերտ միա-
բանութիւն հաստատել գաղթականներու
հետ: Մեք կրնախաղասէինք ի հարկէ այս
տեսակ խաղաղութիւնն օտար զօրութեանց
դաշնակցութենէն, եթէ միայն հաւաստի
լինէինք որ դուք իրաւ առ այդ պատգա-
մաւորեալ էք: Ի այց ատոր վրայ է իսկ որ
կերկրայեմ: Անդլեական ազգը կարող էր
անշուշտ կրկին դրաւել մեր բարեկամու-
թիւնը, եթէ ատելի կուսակալները յետս
կանչէր, մեր այրուած քաղաքները նորէն
վերականգնէր ու վերջապէս մեզ հասած
փնասները վճարելու յօժարէր. բայց նորա
հպարտութենէն և անխոհեմութենէն այս-
պիսի խմաստուն ընթացք սպասել կարելի
չէ: Իբրև հարստահարիչ, պատերազմա-
սէր, բռնակալ և ուրտօնասէր ազգ, Անդ-
լեացիք իրենց սրտի չար կրքերուն դար-
ձեալ հոսանք տալու և վերջապէս այնքան
զանձ ու մարդիկ զոհելու են, ինչքան որ
Լեօփէնը զոհած էր խաչակրաց պատերազ-
մի ժամանակ: Պատերազմ զեկուցանե-
լով ձեզ երկիւղ ազդած չեմ լինել ի
հարկէ. Անդլեացիք չեն հաւատար, մինչև
որ բանի վերջը չըտեսնեն,, :

Պատերազմը շարունակուեցաւ: Ամերի-
կայի միացեալ նահանգներու համար Այա

չինթոն շատ պատուական զօրապետ էր,
միայն դեռ զինուորներ չունէր և պատե-
րազմի ժամանակ իսկ գունդեր կողմելու
ստիպուած էր, այն ինչ թշնամին հակա-
ռակորդէն շատ զերազանց ու բարեկարգ
զօրքերու վրայ իշխելով՝ արդէն յաղթա-
նակներ տանելու սկսած էր:

Այնու ամենայնիւ քաջասիրտ Ամերի-
կացիք վայրկեան մ' ա՛նգամ չերկբայեցին,
այլ «Ալա է», — ըսին — «մեռնել դաշ-
տի վրայ ազատութեան և իրաւանց համար
մարանչելով, քան թէ անարգօրէն խոնար-
հիլ օրինազանց բռնակալին,, :

1796 թ. վերջին Յրանկլին միացեալ
նահանգներու կողմէն դեսպան տաքուե-
ցաւ Յրանսիայ՝ այս երկիրս իր հայրենեաց
հետ դաշնակցութեամբ միաւորելու հա-
մար: Այդ միջոցին յաջողութիւնը դեռ
չուրկին Անդլեական զէնքին կրպտականեր և
Եւրոպացիք կարծելով, թէ մանուկ տե-
րութիւնն Ավիխանսի միւս կողմը արդէն
խաղառ հոգեվարքի մջ է, նորա հետ միա-
նայն անխոհեմ կըհամարէին: «Սակայն
Յրանկլին բորբոքեց ամբողջ Յրանսիան
և նոր ողի շնչեց այս երկրի մջ: Բաղա-
քական հասարակ զգեստ հագած, մազե-
րը պարզ սանարած, պատկառելի և խմաս-
տուն ալևորը ասեա թէ ուրիշ աշխարհէ
եկած տեսլեան սպաւորութիւն գործեց
Ալեքսայլե ոսկեզարդ պալատականներու
բազմերանդ շրջանին մջ և նոր ժամանա-
կի մարդարէ երևցաւ նոցա աչքին: Յրան-
սիական ազնուականները, նոյն իսկ ազ-
նուականները, որք իրենց քաղաքացիներու
վրայ միայն քամահանօք կրնայէին, մէկ
մէկու հետ կըմրցէին այժմ ո՞րքան կարելի է
աւելի մեծարանք շնորհելու Ամերիկայի քա-

զարացուն , , : “ Լ յն մտերմութիւնը , , ,
 — գրեց Պրանկլին ընկերներէն մինին — և
 այն յարգանքը , այն ջերմ սէրը , որ Լ-
 մերիկացիք այս տեղ կրտսանան , երբէք
 չեն գտներ Լնդլիայի մէջ , եթէ այն տեղ
 գնան , , : Արովհեակ քիչ ժամանակէն ետ-
 քը Լմերիկացւոց զօրքերն ևս նշանաւոր
 յաղթանակներ սկսած էին տանելու , ուս-
 տի 1778 թ . յաջողուեցաւ մէկ առեւար-
 բական և մէկ յարձակողական ու պաշտ-
 պանողական դաշնադրութիւն հաստատե-
 լու Լմերիկայի ու Պրանսիայի մէջ , և Պր-
 անկլին վերջապէս թոյլատուութիւն ստա-
 ցաւ ներկայանալու Վիւդվիլ Ճ . Օ . թա-
 զաւորին : Եհա թէ ինչ կըզրէ այս մասին
 շիւտարդ գ' Օրերթոյլ :

“ Վերջապէս Պրանկլին տեսութիւն
 ունեցաւ նորին գերիշխանական մեծու-
 թեան հետ : Հետաքրքրութենէ շարժ-
 ուելով հեան եկան նաև շատ ուրիշ Լմե-
 րիկացիք և այլ օտարականք , որք արդէն
 առջևէ գումարուած էին : Ժողովրդի ու-
 շաղրութիւնը միանգամայն յուզուած էր
 ծերունու ալեաց , պատկառելի կերպարան-
 քի ու պարզուկ հագուստի վրայ : Օստի-
 հարութիւնքն ու կրկնապատուող մտեր-
 մական ցոյցերը յայտ արարին այն համա-
 կրութիւնը , որին որ Պրանսիացիք բոլոր
 միւս ազգերէն աւելի ընդունակ են և որոյ
 հրապոյրը նոքա իրենց նուրբ ազնուու-
 թեամբ ու քաղաքավարութեամբ զիտեն
 աւելի ախորժ ու գրաւիչ անել անոր ար-
 ժանաշող մարդու սրտին : “ Նորին մեծու-
 թիւնն այսպէս խօսեց առ նա . “ Վկայե-
 ցէք Լմերիկայի միացեալ նահանգներուն
 իմ բարեկամութիւնս և թոյլ տուէք ինձ
 ասելու , որ ձեր վարմունքէն , մինչդեռ որ
 տէրութեանս մէջ էք , դո՛՛հ եմ ի սրտե , , :
 Արբոր այնուհետև Պրանկլին արտաքին
 գործոց պաշտօնակցին այցելու թիւն անե-
 լու գնաց , ջերմ ողջոյններ ստացաւ ժողո-
 վրդէն , որ նորան սպասելով ծամբու վրայ
 կանգնած էր , , :


Պրանսիայի դաշնակցութիւնն այն օ-
 դուան ունեցաւ , որ միացեալ նահանգնե-
 րը սիրտ առին , թշնամիները վհատել սկը-

սան և Վաշինգթոնի պատերազմական մի-
 ջոցները շտացան : Սակայն Պրանսիայէն
 Լմերիկայ ուղարկուած զօրքերը գրեթէ
 մտրախ մէջ չբնտան , քանզի Լմերիկացիք
 իրենց արդար գործը օտարի ձեռքով հո-
 գալու տեղ , իրենք իրենց քաջութեամբ
 զայն բարի վախճանի հասուցին :

Միացեալ նահանգներու վրայ վերստին
 իշխանութիւն ձեռ բերելու համար Լնդ-
 լիացիք այլ ևս մէկ անգամ ոտքի ելան ,
 վայրենի Հնդկի ցեղերը գաղթականներու
 վրայ յարձակուելու դրդեցին և ամենա-
 զարհուրելի միջոցներ բանեցնելով սկսան
 նոցա դաշտերն ու դիւղերն այրել և աս-
 պատակել : Սակայն որչափ և կորուստա-
 բեր էր այդ գարշելի մոլեղնութիւնը Հիւ-
 սիսային Լմերիկայի բնակչաց համար , այ-
 նու ամենայնիւ հեռեանքը բարի եղաւ :
 Մինչև անգամ և այն մտրդիլը , որք մայ-
 բնի երկրին դեռ հարազատ էին , ոտքի ե-
 լան և զէնքի զիմեցին այժմ , քանզի չէին
 ցանկար հարազատ մնալ տէրութեան մը ,
 որ իր իշխանութիւնը բարբարոսական դա-
 բուց վայրենի հնարներով հաստատել կը-
 ջանար : Եղատութեան համար նահատակ-
 ուող քաջ ազգի համբաւն այնպէս տա-
 բաժուեցաւ և այնպէս ջերմ համակրու-
 թիւն գտաւ աշխարհիս մէջ , որ ամենայն
 երկիրներէն յօժարակամ զննուողներ եկան
 Լմերիկայ և մասն Վաշինգթոնի դրօշա-
 կին տակ :

Վերջապէս Լնդլիայի բազուկը թուլա-
 ցաւ , և քանզի այսուհետև մարդիկ ու գան-
 ձեր զոհելով ինք իրեն օգտել կարող չէր ,
 հարկ համարեց հաշտութիւն հաստատել ,
 որ և տեղե գտաւ Փարիզի մէջ 1783 թ :
 Հիւսիսային Լմերիկայի անկախութիւնն
 ընդունելով՝ Լնդլիան կորուց 20,000 քա-
 ռակուսի մղան երկիր :

(Մնացեալն է յետագայ)



Քաղաքապետի Տիրիման—Վոյս Գէորգի, Կառնուրը Լուսարար, Մշակույթի քոյ, Դէն Է. եւ Բազմի Կարգանայ Գաւառ Սոյ Էր Եւզանկայ Գործարարը: